Հավելված N 5

Հայաստանի Հանրապետության տարածքային
կառավարման և ենթակառուցվածքների նախարարի
« » -ի 2021 թվականի թիվ -Ա
հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՎԱՆԱՁՈՐ - 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

I.ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՄԱՐԶՈՒՄ 5

II.ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ 5

III.ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ 7

IV.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 8

V. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ 10

VI. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ 11

6.1. Կրթություն 11

6.2. Մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր 15

6.3 Առողջապահություն 15

6.4 Սոցիալական պաշտպանություն 17

VII.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 19

7.1. Ճանապարհաշինություն 19

7.2. Ջրամատակարարում և ջրահեռացում 20

7.3. Գազամատակարարում 21

7.4. Էներգետիկա 22

VIII.ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ 22

IX. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ 24

9.1 Տարածքային կառավարում 24

9.2 Տեղական ինքնակառավարում 26

9.3 Քաղաքացիական հասարակություն 26

9.4 Արտակարգ իրավիճակներ բնակչության և տարածքների պաշտպանություն 27

X. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 29

XI. ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ 30

XII. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 30

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԶՌ	Հայաստանի զարգացման ռազմավարություն
ՀՏԶՌ	Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ԵՄ	Եվրոպական Միություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՄԳ	Մոնիտորինգ և գնահատում
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏԶ	Տարածքային զարգացում
ՏԶՌ	Տարածքային զարգացման ռազմավարություն
ՄԶՌ	Մարզի զարգացման ռազմավարություն
ՖՀ ՊԱԿԱ	Ֆրանսիայի Հանրապետության Պրովանս Ալպեր Լազուրի Ափ Ռեգիոն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի 2021 թվականի գործունեության ծրագիրը մշակվել է ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 6-ի նիստի թիվ 29 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ Լոռու մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության (ՄԶՌ) հիման վրա:

2021թ. տարեկան գործունեության ծրագրում ներառված են 2021 թվականի ՀՀ պետական բյուջեի, համայնքային բյուջեի, մասնավոր ներդրումներով, դոնորներով, միջազգային և այլ կազմակերպությունների կողմից Լոռու մարզում ընթացիկ տարում նախատեսվող ներդրումային ծրագրերը: Ոլորտների «տրամաբանական հենք»-ով նախանշված են հիմնական ծրագրային միջոցառումները, որոնց մշտադիտարկման աշխատանքները կիրականացվեն ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից:

ՄԶՌ-ով սահմանվել է մարզի զարգացման տեսլականը, այն է՝ ունենալ բազմաճյուղ, զարգացած արդյունաբերություն, արդիականացված գյուղատնտեսություն և զարգացած զբոսաշրջություն, ՏՏ ոլորտ:

2021թ. գործունեության ծրագրի հիմքում ընկած է ՄԶՌ-ի նպատակները՝

- մարզի տնտեսական աճի ապահովում,
- մարզի երեք տարածաշրջանների համաչափ զարգացման ապահովում,
- տարածքային և տեղական զարգացման կառավարման կարողությունների և համակարգերի զարգացում:

ՄԶՌ հիմնական գերակայություններն են՝

- արտահանմանը միտված արդյունաբերության զարգացում,
- ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում,
- մշակութային, գյուղական տուրիզմի զարգացում,

Լոռու 2021թ. գործունեության ծրագրի իրագործման արդյունքում ակնկալվում է ստանալ հետևյալ հիմնական արդյունքները՝

- Մարզի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճ,
- Ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների թվի աճ,
- Ակտիվ կազմակերպությունների թվի ավելացում,
- Գործազրկության մակարդակի նվազեցում,
- Աղքատության մակարդակի նվազեցում,
- Նորագույն տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների ավելացում,
- Մարզային վարչակազմերի բարձրագույն կրթությամբ աշխատակիցների աճ,
- Մարզային և համայնքային աշխատողների վերապատրաստման ծրագրերի իրականացում՝ նվիրված մարզային/տեղական զարգացմանը:

Սույն փաստաթղթի կազմման հիմնական նպատակներն են՝

- նկարագրել ՄԶՌ-ի գերակայություններին և նպատակներին հասնելու 2021թ.-ին իրականացվելիք միջոցառումները,
- ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում,
- համադրել իրականացվելիք միջոցառումներն ըստ ոլորտների և ֆինանսական աղբյուրների:

I. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՄԱՐԶՈՒՄ

Լոռու մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունում բավարար կերպով գնահատված է աղքատության մակարդակը մարզում, այն կազմում է.

Տարեթիվ/մակարդակ	Աղքատության	Ծայրահեղ աղքատության	Գործազրկություն
2021թ. կանխատեսում	*28.5%*	*1.9%*	*12.3*

Մարզում աղքատության և գործազրկության ցածր մակարդակը պայմանավորող հիմնական գործոնները մարզի սոցիալ-տնտեսական զարգացման խոչընդոտներն են, որոնց հիման վրա նախանշվել են աղքատության հաղթահարման ռազմավարությունն ու համապատասխան միջոցառումները:

II. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ

Արդյունաբերության, Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ ՄԶՌ-ով առաջարկվում է բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով մարզում բարձրացնել գործարար ակտիվությունը, հատուկ ուշադրություն դարձնելով արտահանմանն ուղղված արդյունաբերության զարգացմանը, մասնավորապես՝ հանքարդյունաբերությանը, թեթև և սննդի արդյունաբերությանն ու ՏՏ ոլորտին:

Մարզում ոլորտի հիմնախնդիրից է հանդիսանում հանքարդյունաբերության խոշոր ձեռնարկությունների փակումը, դրանց գործարկումը պահանջվում է օրինականության

սահմաններում: Լուրջ խնդիր է մնացել նաև մեքենաշինության և թեթև արդյունաբերության գործող կազմակերպությունները, որոնք աշխատում են հիմնականում իրենց հզորությունների 15-30% սահմաններում: Վերջիններս ունեն նոր սարքավորումներով և տեխնիկայով վերազինման կարիք:

Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության զարգացման համար անհրաժեշտություն է ՓՄՁ-ներին ցուցաբերվող աջակցությունը, առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով անցում կատարել մասնավոր հատվածի զարգացման ծրագրային միջոցառումների իրականացմանը, համայնք-մասնավոր հատված համագործակցությանը, մարզի և ներդրումների ապահումը:

2021թ. մարզի համար շարունակում է առաջնային համարվել արտահանող արդյունաբերական ոլորտների զարգացումը և արտադրության ծավալների աճը:

ՀՀ Լոռու մարզի տնտեսության առաջատար ճյուղն՝ արդյունաբերությունն է, որի հիմնական ուղղություններն են հանքագործական և մշակող արդյունաբերությունները (մասնավորապես՝ մետաղագործական, սննդի և թեթև, այդ թվում՝ Վանաձորում՝ թեթև արդյունաբերությունը և մեքենաշինությունը, Ստեփանավանում, Տաշիրում և Սպիտակում՝ սննդի արդյունաբերությունը):

«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն 2021թ.-ին նախատեսվող ներդրումների ծավալը կազմում է 75,0 մլն դրամ՝ 15 նոր աշխատատեղով: «Սագամար» ՓԲԸ-ի կողմից ակնկալվող ներդրումների ծավալը կազմում է 12,0 մլն դրամ, 5 նոր աշխատատեղ:

Նախատեսվում է Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր բնակավայրում չինական ներդրողների կողմից հիմնել «Նյու Իդա» Ջրի շշալցման արտադրամաս, որի արդյունքում կստեղծվի 20 նոր աշխատատեղ: ՀՀ կառավարության 23.05.2019թ. N646-Ա որոշմամբ «Նյու Իդա» ՍՊԸ-ին Ստեփանավան խոշորացված համայնքի Կաթնաղբյուր բնակավայրում հատկացվել է 2,7 հա ընդհանուր մակերեսով հողամաս, հանքային ջրի արդյունահանման և շշալցման գործարան կառուցելու նպատակով: «Նյու Իդա» ընկերության ներդրումային ծրագրի շրջանակներում ՍՊԸ-ի և Հայաստանի Հանրապետության (ի դեմս ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության) միջև 25.04.2019թ. կնքվել է թիվ Պ599 ընդերքօգտագործման պայմանագիր:

Զբաղվածության մարզային գրասենյակների միջոցով 2021թ.-ին մարզում կիրականացվեն գործատուներին աջակցման ծրագրեր ավելի քան 21.7մլն դրամ արժողությամբ, այդ թվում՝

- Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում: ՀՀ Լոռու մարզին հատկացվող ֆինանսական

միջոցների չափը կազմում է 21,7մլն. դրամ՝ 86 ծրագրի համար (Վանաձոր՝ 9591.6 հազ. ՀՀ դրամ, 38 ծրագիր, Ալավերդի՝ 1514.5 հազ. ՀՀ դրամ, 6 ծրագիր, Սպիտակ՝ 3786.2 հազ. ՀՀ դրամ, 15 ծրագիր, Ստեփանավան՝ 4795.8 հազ. ՀՀ դրամ, 19 ծրագիր, Տաշիր՝ 2019.2 հազ. ՀՀ դրամ, 8 ծրագիր):

ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 13-ի N 227-Ա որոշման համաձայն Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը (ՁԻՀ) ստանձնեց Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի (ՎՏԿ) գլխավոր օպերատորի պարտականությունները:
ՎՏԿ-ն իր գործունեությունը ծավալում է երեք հիմնական ուղղություններով՝

- Մասնագիտական կարողությունների զարգացում,
- Բիզնես զարգացում և ակսելերացիա,
- Կառավարվող աշխատանքային տարածք
- Բիզնես տարածքների տրամադրում:

Կազմակերպվում են ձեռնարկատիրական և կառավարման հմտությունների զարգացմանը նվիրված սեմինարներ և դասախոսություններ, մարզում գործող ընկերություններին տրամադրվում են բիզնես խորհրդատվություն: Բանակցություններ են տարվում կենտրոնում նոր ընկերությունների ՎՏԿ-ում տարածքներ տրամադրելու ուղղությամբ: 2021թ-ին տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ներդրումների ծավալը գնահատված չեն:

2021թ. արդյունաբերության, ՓՄՁ և մասնավոր հատվածի բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 109,707. 0 հազար դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 40 մշտական աշխատատեղ:

III. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Զբոսաշրջության խթանմանն ու զարգացմանն ուղղված Վանաձոր, Ալավերդի, Լոռի Բերդ համայնքների կողմից մշակվել են զարգացման ծրագրեր, որոնք 2021թ.-ին կյանքի կկոչվեն ներդրումների առկայության դեպքում:

Պլանավորվում է վերագործարկել «ԼՈՌԻ» տուրիզմի զարգացման հիմնադրամի «Թումանյան Աշխարհ» զբոաշրջային միջհամայնքային գրասենյակը:

Ալավերդի համայնքում ընթացքի մեջ է «Մենձ Էր» քարանձավային տուրիզմի կենտրոնի զարգացման ծրագիրը, արդեն իսկ ներդրվել է 40,0 մլն. դրամ, 2021թ-ին ներդրումների ծավալը կազմում է 10,0մլն դրամ:

2021թ.-ին կշարունակվեն ագրոտուրիզմի խթանմանն ուղղված «Ճամփեզրյա կայան» բազմաֆունկցիոնալ կենտրոնի ներդրումները:

Մեծ Պարնի համայնքում Թռչկան ջրվեժի էկոհամակարգի պահպանում, էկոտուրիզմի զարգացում ծրագրի շրջանակներում 2021թ.-ին նախատեսվում է 25,0 մլն դրամի աշխատանքներ:

2021 թվականին մասնավոր ներդումների միջոցով պլանավորվում է

- հյուրանոցային տնտեսությունների կառուցում մարզի տարբեր համայնքներում,
- արկածային տուրիզմի զարգացման կենտրոնի կառուցում,
- միջազգային ռաֆտինգի դպրոցի հիմնում Օձուն համայնքի վարչական տարածքում:

2021թ. զբոսաշրջության բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 42,000. 0 հազար դրամ: Նշված ծրգրերի իրականացման արդյունքում կստեղծվի 7 մշտական աշխատատեղ:

IV. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության բնագավառում տարբեր ֆինանսական աղբյուրներով նախատեսվում է՝

- գյուղտեխնիկայի ձեռքբերում, գյուղատնտեսական հումքի մթերում, ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալություն, հակակարկտային ցանցերի ներդրում, փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրում, ոչխարաբուծության և այծաբուծության զարգացում, ինտենսիվ պտղատու այգիների հիմնում, փոքր և միջին խելացի անասնաշենքերի կառուցում:

Պետական օժանդակության «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի շրջանակներում շահառուներին կտրամադրվի ավելի քան 3 մլրդ. դրամ արժեքով վարկային միջոցներ:

«Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության» ծրագրի շրջանակներում շահառուներին կտրամադրվի շուրջ 50 մլն. դրամ վարկային միջոցներ:

Կիրականցվեն նաև մարզի անասնաբուժական ծառայությունների կողմից գյուղատնտեսական կենդանիների անասնահամաճարակային հիվանդությունների դեմ պայքարի կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներ, հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման ինչպես նաև բույսերի պաշտպանության նպատակով մի շարք միջոցառումներ:

Ջրային պետական կոմիտեի միջոցով ոռոգման համակարգի վերանորոգման և գարնան նախապատրաստական աշխատանքների վրա կկատարվի 15.6 մլն.դրամի ներդրում:

Պետական աջակցության համայնքներին տրամադրվող սուբվենցիոն ծրագրերով պլանավորվում է իրականացնել 173.1 մլն դրամ արժողությամբ գյուղտեխնիկա, մեքենասարքավորումներ, հակակարկտային կայանքներ:

✓ Մասնավոր ներդրումների շրջանակներում կիրականացվեն՝

«Բոզոյան» ՍՊԸ–ի կողմից խոզաբուծական տնտեսության կառուցման աշխատանքները՝ 500 գլուխ խոզամոր տարողությամբ: Ներդրումների ծավալը կկազմի 300 մլն. դրամ:

Մեծավան համայնքի Ձյունաշող բնակավայրում «Աբսալյուտ օրգանիկ» ՍՊԸ կառուցում է կաթի վերամշակման և սպանդի արտադրամասերով համալրված անասնաբուծական համալիր:

Սպիտակի թռչնաբուծական ֆաբրիկայում կառուցվում է ինկուբատորային արտադրամաս և արևային էներգիայի ստացման համակարգ, ներդրման գումարը կկազմի 300 մլն. դրամ:

Մարզի Ստեփանավան, Գյուլագարակ և Շնող համայնքներում կկառուցվի թվով 3 սպանդանոցներ:

Միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ կիրականացվեն՝

«Անասնաբուծության զարգացում հարավ-հյուսիս» ծրագիրի շրջանակներում համայնքներում կիրականացվի՝ արոտային ենթակառուցվածքների կառուցում և վերամշակման ձեռնարկությունները սարքավորումներով վերազինում: Ներդրումները կկազմի 100 մլն. դրամ:

ՄԱԿ-ի ՄԱԱԶԿ-ի «Մարդկային անվտանգության բարելավումը Հայաստանի համայնքներում» ծրագրի շրջանակներում, Ալավերդի համայնքում գործող «Համով կաթ» կաթի վերամշակման արտադրամասում կիրականացվի սարքավորումներով վերազինում և արտադրատեսակի ընդլայնում:

«ԵՄ կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» (EU-GAIA) ծրագրի շրջանակներում համայնքներում կիրականցվի գյուղատնտեսական նշանակության մեքենաների, սարքավորումների, հետ բերքահավաքի, վերամշակման սարքավորումների և ենթակառուցվածքների ներդրումներ: Ներդրման գումարը կկազմի 120 մլն. դրամ:

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ» ծրագրի շրջանակներում մարզի համայնքներում արոտների ենթակառուցվածքների շինարարության և գյուղ. սարքավորումների տրամադրման վրա կներդրվի 110 մլն. դրամ:

ՄԱԶԾ-ԳԷՀ փոքր դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կշարունակվի Գարգառ և Վարդաբլուր բնակավայրերում ոռոգման համակարգի և արևային ֆոտովոլտային կայանի կառուցումը:

Դոնոր կազմակերպությունների ներդրմամբ կիրականացվեն մեղվաբուծության և ոչխարաբուծության 46.5մլն դրամ արժողությամբ ծրագրեր:

2021թ. գյուղատնտեսության բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 5,066,227. 0 հազար դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 14 մշտական և 409 ժամանակավոր աշխատատեղ:

V.ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Լոռու մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է հանրապետությունում:

Մարզի տարածքում 44 կազմակերպություններ ունեն ընդերքարդյունահանման արտոնագրեր, որոնցից 6-ը մետաղական:

Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին 2021թ. համար ՀՀ պետական բյուջեի կողմից նախատեսվում է հատկացնել 451 մլն. 365.1 հազ դրամ, համապատասխանաբար.

- Ալավերդի - 370 994.0 հազ. դրամ;
- Օձուն - 76 522.5 հազ. դրամ;
- Ախթալա - 3 848.6 հազ. դրամ:

Ախթալա համայնքը 2021թ. նախատեսում է իրականացնել Շամլուղ բնակավայրի զբոսայգու վերակառուցման, կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ:

ՀՀ Լոռու մարզի անտառային պետական ֆոնդը կազմում է 101,205.0 հա, որից անտառածածկ է 85,799.6 հա-ը: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը, հանրապետության անտառային ծածկույթի 30%-ը: Մարզի անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև սոցիալ-տնտեսական, գիտական բարձր արժեք և աչքի են ընկնում բուսական տեսակների բազմազանությամբ: Մարզի անտառկազմող հիմնական ծառատեսակներն են՝ հաճարենին, կաղնին, բոխին և սոճին, իսկ ոչ հիմնական տեսակներ են համարվում լորենին, կեչին, թեղին, հացենին:

Մարզի անտառների կառավարումն իրականացվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 5 անտառտնտեսությունների կողմից՝ Վանաձորի, Թումանյանի, Ջիլիզայի, Ստեփանավանի և Տաշիրի:

Ընթացքի մեջ է «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների հարակից էկոհամակարգերի կայուն կառավարում և համայնքային կարողությունների զարգացում» դրամաշնորհային ծրագիրը: Ծրագրի հայեցակարգում ընդգրկված են Հայաստանի Հանրապետության 3 մարզ, այդ թվում Լոռու մարզը՝ Մարգահովիտ և Ֆիոլետովո բնակավայրերով: Լոռու մարզում իրականացվող ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 79.7մլն. դրամ:

Թեղուտի անտառվերականգնման ծրագրի շրջանակներում 2015-20թթ. ընթացքում Շնող համայնքում իրականացվել է 76.2 հա պտղատու այգիների հիմնում: 2021թ.

նախատեսվում է ևս շուրջ 30 հա պտղատու այգիների հիմնում, որի արժեքը նախնական տվյալներով կազմում է 60 մլն. դրամ:

«Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը 2021թ. մարզում նախատեսում է իրականացնել 42հա տարածքի վրա անտառվերականգնման աշխատանքներ, 2020թ. հիմնված շուրջ 88 հա անտառտմշակույթների լրացման և խնամքի աշխատանքներ, իսկ նախորդ տարիներին տնկված ծառերի խնամքի, ցանկապատի վերանորոգման աշխատանքները կպլանավորվեն տարվա ընթացքում իրականացվող ուսումնասիրություններից հետո: Աշխատանքներ են տարվում նաև Լոռու մարզի այլ համայնքների հետ՝ 2021թ. անտառտնկման համար անհրաժեշտ տարածքներ տրամադրելու ուղղությամբ:

Ծառատունկի համար նոր տարածքների ընտրության հարցում մարզպետարանի բնապահպանության բաժինը սերտ համագործակցում է «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի հետ:

2021թ. «Մայ Ֆորեստ Արմենիա» բարեգործական բնապահպանական ՀԿ-ն նախատեսում է գարնանը Ջրաշեն և Շիրակամուտ համայնքում իրականացնել անտառպատման աշխատանքներ: Գարնանային տնկման աշխատանքների ավարտից հետո իրականացվելու են խնամքի աշխատանքներ: Աշնան ընթացքում շարունակվելու է անտառհիմնման աշխատանքները վերը նշված համայնքներում: Շարունակվելու է սերմերի ձեռք բերման աշխատանքները:

2020թ. վերջին ավարտվել է ՀՀ կառավարության, UNDP և GEF միջազգային կազմակերպությունների նախաձեռնությամբ Լոռու և Տավուշի մարզերում «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը հյուսիս-արևելյան Հայաստանի չոր լեռնային լանդշաֆտներում» ծրագիրը: Ընթացքի մեջ են Լոռու մարզում գործող Վանաձորի, Ստեփանավանի, Տաշիրի և Ջիլիզայի անտառտնտեսությունների կառավարման պլանների նախագծերի քննարկման աշխատանքները: Քննարկումների ավարտից հետո կհաստատվեն անտառկառավարման պլանները:

Մարզում էկոլոգիական վիճակը բարելավելու և բնապահպանական այլ ծրագրեր իրականացնելու համար Լոռու մարզպետարանը սերտ համագործակցում է պետական կառավարման մարմինների և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ:

2021թ. բնապահպանության բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 836,210. 6 հազար դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 447 ժամանակավոր աշխատատեղ:

VI. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

6.1Կրթություն

ՀՀ Լոռու մարզում գործում են 163 պետական հանրակրթական ուսումնական հաստատություն, որից 68-ը՝ հիմնական, 80-ը՝ միջնակարգ, 11-ը՝ ավագ, 1-հատուկ դպրոց /ԿԳՄՆՍ նախարարության ենթակայության/ և 3 վարժարան:

Մարզային ենթակայությամբ գործող դպրոցներում ուսումնասիրվող օտար լեզուներն են ռուսերենը, անգլերենը, ֆրանսերենը և գերմաներենը:

ՀՀ Լոռու մարզի կրթական հաստատությունների կառավարման արդյունավետության և կրթության որակի բարձրացման ուղղությամբ 2021թ.-ի ընթացքում կիրականացվեն միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են մարզի կրթական հաստատությունների կառավարման արդյունավետության և կրթության որակի բարձրացմանը: Այդ համատեքստում հանրակրթական դպրոցներում կվերահսկվի սովորողի հմտությունների, կարողությունների և արժեքային համակարգի ձևավորումը, կիրականացվեն մրցունակ կրթության ապահովմանն ուղղված աշխատանքներ:

❖ Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացման և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովման նպատակով» անհրաժեշտ է ՀՀ ԿԳՄՍ նախարարության ծրագրերի իրականացման գրասենյակ ներկայացնել ևս 4 դպրոցի տվյալներ (Սպիտակի թիվ 4 հիմնական, Լեջանի, Պրիվոլնոյեի, Արծնիի միջնակարգ դպրոցներ), որտեղ նպատակահարմար է հիմնել նախակրթարան:

❖ Դասապրոցեսը արդիական մեթոդներով անցկացնելու նպատակով դպրոցները համալրել նոր սերնդի համակարգիչներով, էլեկտրոնային գրատախտակներով:

❖ Մարզի հանրակրթական դպրոցներում նախնական ինժեներական կրթության զարգացման ծրագրի շրջանակում վերահսկողություն իրականացնել Արմաթ ինժեներական լաբորատորիաների գործարկման, ռոբոտաշինության խմբակների գործունեության նկատմամբ: Երեխաների մոտ տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ գիտելիքները զարգացնելու, մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու նպատակով ստեղծել «Համակարգչային գիտություն» առարկայի խմբակներ գյուղական և քաղաքային համայնքների դպրոցներում:

❖ 2021թ. համալրել կրթության առանձնահատուկ կարիք ունեցող աշակերտների ընդգրկվածությունը հանրակրթական դպրոցներում, կատարել հետևողական աշխատանքներ՝ նրանց կրթության կարիքի գնահատման, անհատական ուսումնական պլանների կազմման և ուսուցումը առավել մատչելի դարձնելու ուղղությամբ: Այդ համատեսքում անհրաժեշտ է դպրոցները դարձնել առավել մատչելի /հարմարեցված սանհանգույցներ, թեքահարթակների կառուցում/:

❖ Կրթության որակի բարձրացման նպատակով 2021թ. ավելացնել ՀՀ Լոռու մարզային ենթակայության երկարօրյա խնամքի և ուսուցման ծառայություններ իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների թիվը:

❖ Մարզում կան շատ դպրոցներ, որոնք թերբեռնված են: Դրանք հիմնականում գյուղական կամ սահմանամերձ դպրոցներն են: Չկան անհրաժեշտ քանակությամբ, բարձրակարգ մասնագետներ, դասավանդող անձնակազմը բավարար չի տիրապետում կրթության ժամանակակից մեթոդներին և տեխնոլոգիաներին, դեռևս շոշափելի թիվ են կազմում ոչ մասնագետները: Կարևորելով ուսումնական գործընթացում տեղեկատվական-հաղորդակցման տեխնոլոգիաների դերն ու նշանակությունը՝ ստեղծել բարձրակարգ մասնագետներով համալրված դպրոցների բազա, կազմել ժամանակացույց և

կազմակերպել հեռավար դասեր հեռավոր գյուղերի մասնագետ կադրեր չունեցող դպրոցների հետ:

❖ Դասավանդման որակի բարելավմանն ուղղված տարբեր կազմակերպությունների կողմից կազմակերպվում և իրականացվում են ուսուցիչական անձնակազմի մասնագիտական և մանկավարժական գիտելիքների, հմտությունների և կարողությունների բարձրացում, որոնք տարբերվում են իրենց բովանդակությամբ և դասավանդման մոտեցումներով: 2021թ. շարունակել համագործակցությունը Կրթական ծրագրերի կենտրոնի, Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի դասախոսական կազմի, «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի հետ, որոնք շարունակական վերապատրաստման դասընթացներ են իրականացնում ուսուցիչների հետ: COVID-19 համավարակով պայմանավորված կրթության շարունակականությունը ապահովելու նպատակով մանկավարժների համար կազմակերպել առցանց վերապատրաստման դասընթացներ, որոնց ժամանակ կծանոթանան հեռավար ուսուցման հարթակներին և գործիքակազմին:

❖ Դպրոցները որակյալ մասնագետներով ապահովելու նպատակով շարունակել համագործակցությունը «Դասավանդիր Հայաստան» հիմնադրամի հետ, և մարզի հեռավոր փոքրաթիվ աշակերտներ ունեցող դպրոցներն ապահովել մասնագետ կադրերով:

❖ 2021 թվականին ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական թվով 26 ուսումնական հաստատություններում առկա են 322 երթևեկող աշակերտ, 119 ուսումնական հաստատությունում աշխատում են 642 երթևեկող ուսուցիչ: Երթևեկող ուսուցիչների համար նախատեսվել է 46258.7 հզ դրամ, իսկ երթևեկող աշակերտների փոխհատուցման գումարը կազմում է 12203.5 հզ դրամ:

Կրթության բնագավառում միջպետական համագործակցություն

❖ Կրթության բնագավառում միջպետական համագործակցությունն ապահովելու նպատակով միջազգային կրթության ամերիկյան խորհուրդների հայաստանան գրասենյակի և ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում իրականացնել ապագա առաջնորդների փոխանակման (Future Leaders Exchange կամ FLEX) կրթաթոշակային ծրագիրը:

❖ 2021թ. Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի, ինչպես նաև Գյումրիում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնների հետ ամենամյա համագործակցության շրջանակներում կազմակերպել և անցկացնել «Ռուսաց լեզվի լավագույն ուսուցիչ» ամենամյա հանրապետական մրցույթ, ինչպես նաև ռուսաց լեզվի ուսուցիչների վերապատրաստումներ:

❖ Որակյալ կրթական գործունեություն իրականացնելու նպատակով բարելավել մարզի հանրակրթական դպրոցների և մանկապարտեզների շենքային պայմանները, թարմացնել լաբորատոր գույքը, մեթոդական ձեռնարկները, ստեղծել համակարգչային սենյակներ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ տեսադասեր և հեռավար դասեր անցկացնելու համար:

❖ Ասիական բանկի կողմից իրականացվող սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում 2021թ նախատեսվում է շարունակել Ստեփանավանի թիվ 3 դպրոցի շինմոնտաժային աշխատանքները, մեկնարկել Վանաձորի թիվ 19, Ալավերդու թիվ 2 հիմնական և Օձունի թիվ 2 միջնակարգ դպրոցների շինարարական աշխատանքները:

❖ «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշմամբ «Ապահով դպրոց» ծրագրի շրջանակներում համապատասխան ֆինանսական միջոցներ են նախատեսվել փոքր թվակազմով երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար: Նշված ծրագրով նախատեսվում է ՀՀ համայնքներում փոքր թվակազմով երեխաներով համալրված (մինչև 100 սան ունեցող) սեյսմակայունության խնդիրներով հանրակրթական դպրոցների փոխարեն կառուցել մոդուլային շենքեր, որոնք կծառայեն և որպես հանրակրթական դպրոցներ, և որպես նախակրթարաններ, և որպես համայնքային մշակույթի կենտրոններ: 2021 թվականին նշված ծրագրով նախատեսվել է իրականացնել Հագվու և Մեդովկայի դպրոցների շինարարական աշխատանքները:

❖ 2021թ. ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի աջակցությամբ մարզային ենթակայության պետական հանրակրթական 50 ուսումնական հաստատություններում իրականացնել խոհանոցների, ճաշարանների և սննդի պահեստների վերանորոգման և համապատասխան գույքով վերազինման աշխատանքներ:

❖ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացվող «Կովկասի և Կենտրոնական Ասիայի ընտրված երկրներում պարենային անվտանգությանը և սնուցմանն ուղղված կարողությունների հզորացում» փորձնական ծրագրի շրջանակում 2021թ. նախատեսվում է կատարել արևային էներգիայի կայանների տեղադրման աշխատանքներ 16 դպրոցներում, ջերմոցների հիմնման աշխատանքներ 5 դպրոցներում /Սպիտակի թիվ 8, Ստեփանավանի թիվ 6, Մարգահովիտի, Կուրթանի Վանաձորի թիվ 27 հիմնական/, այգիների հիմնման աշխատանքներ 6 դպրոցներում /Դարպասի, Ֆիոլետովոյի Կաթնաջրի, Շահումյանի, Ճոճկանի, Ալավերդու թիվ 12 հ/դ/, հատապտղային այգիների հիմնման աշխատանքներ 2 դպրոցներում /Լեռնանցքի մ/դ, Դսեղի մ/դ/: Ծրագրի նպատակն է աշակերտներին զինել ժամանակակից գյուղատնտեսության վերաբերյալ գործնական գիտելիքներով, որը միտված է գյուղատնտեսության կազմակերպման կարծրացած, ոչ արդյունավետության մեթոդները նոր, արդյունավետ մեթոդներով փոխարինմանը և գյուղատնտեսության ոլորտում համայնքների զարգացմանը:

❖ 2021թ.«SOLAR GRUPO» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է արևային կայանների տեղադրման աշխատանքները Աքորու դպրոցում՝ 15.8 կվտ հզորությամբ, Մարգահովիտի դպրոցում ՝ 12.0 կվտ, Սպիտակի թիվ 2 դպրոցում՝ 8 կվտ, Սպիտակի թիվ 1 դպրոցում՝ 15.8 կվտ, Տաշիրի թիվ 2 դպրոցում՝ 20 կվտ, Վանաձորի թիվ 16 դպրոցում՝ 4 կվտ, Վանաձորի

թիվ 9 դպրոցում՝ 4 կվտ, Վանաձորի թիվ 4 դպրոցում՝15.8 կվտ, Ստեփանավանի թիվ 6 դպրոցում՝ 20 կվտ, Քարինջի դպրոցում՝ 8 կվտ և Կողեսի դպրոցում՝ 15.8 կվտ:

- Շարունակվելու է Վորլդ Վիժն Հայաստանի կողմից «ԵՄ-ն հանուն երիտասարդության. ՍԵՅ ԵՍ հմտություններ աշխատանքի համար» ծրագրի շրջանակում միջոցառումների իրականացումը, մասնավորապես, Ալավերդու արհեստագործական պետական ուսումնարանում և Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջում:
- Գերմանական միջազգային համագործակցության ընկերության հետ (GIZ) համագործակցության շրջանակներում շարունակվելու է Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում փորձարարական կարգով ներդրված «Մեխատրոնիկա» մասնագիտության դուալ կրթական մոդելով ուսուցումը:
- «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ կողմից շարունակվելու է «Մասնագիտական կրթություն և ուսուցում Սյունիքի մարզում» ծրագիրը, որի շրջանակում Ստեփանավանի պրոֆ. Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում 2019/2020 ուսումնական տարվանից ներդրվել է «Անասնաբուժություն» մասնագիտության «Կրտսեր անասնաբույժ» որակավորմամբ, «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության «Տեխնոլոգ՝ կաթի և կաթնամթերքի արտադրության» որակավորմամբ փորձարարական աշխատանքի վրա հիմնված ուսուցման (ԱՀՈՒ) համակարգը:
- Շարունակվելու է Բրիտանական խորհրդի կողմից «Արարելով ապագան» խորագրով նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի զարգացմանն ուղղված ծրագիրը. որի շրջանակում ընտրվել է Լոռու տարածաշրջանային պետական քոլեջը՝ որպես Փլիմութի արվեստի քոլեջի գործընկեր: Ծրագրի շրջանակում 2020թ. մարտի 1-ից 6-ը ընկած ժամանակահատվածում Միացյալ Թագավորության Փլիմութ քաղաք ճանաչողական այցի ընթացքում կայացած գործնական հանդիպումներին և քննարկումներին հստակեցվել են քոլեջի հետ հնարավոր համագործակցության եզրերը:

2021թ. կրթության բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 8,438,934.3 հազար դրամ:

6.2 Մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր

Մասսայական սպորտի զարգացման և նախադպրոցական, դպրոցական տարիքի երեխաների, երիտասարդների ընդգրկումը մարզական միջոցառումներին ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել 30-35 մասսայական միջոցառում:

2021թ. մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 35,617.1 հազար դրամ:

6.3 Առողջապահություն

Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը մարզում սահմանվել է որպես ՄԶՌ-ի ոլորտային գերակա նպատակ: Այս նպատակին է միտված առողջության առաջնային պահպանման մակարդակի, առաջնային և երկրորդային

բուժօգնության բուժհաստատությունների շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ուժեղացման ուղղությունները:

2021թ.-ին ոլորտում կշարունակվեն իրականացվել միջոցառումները նպատակաուղղված.

- Համայնքային և մարզային մակարդակներում կառավարման, մոնիտորինգի և վերահսկողության բարելավմանը
- Ազգաբնակչությանը ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացմանը
- Բնակչության ոչ վարակիչ հիվանդություններով հիվանդացության և մահացության կրճատմանը
- Երեխաներին և դեռահասներին ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացմանը
- Նորածինների առողջության բարելավմանը, նորածնային հիվանդացության և մահացության կրճատմաանը, մայրական մահացության կրճատմանը
- Վաղ հասակի երեխաների հիվանդացության և մահացության իջեցմանը, առողջ աճի և զարգացման ապահովմանը

2021թ.-ին մարզում կիրականցվեն՝

- մարզի առողջապահական ընկերությունների կանխատեսվող բյուջեն, ներառյալ պետական պատվերը և վճարովի ծառայությունները) առողջապահական ընկերությունների նոր ժամանակակից սարքավորումներով հագեցում և նոր ծառայությունների ներդրում
- 2021թվականին վճարովի ծառայությունների գները սահմանել շուկայական գներին համապատասխան /ոչ պակաս սոցիալական փաթեթով մատուցված ծառայությունների գների/
- Բժշկական կադրերով համալրում՝ կազմակերպելով դինամիկ սերնդափոխություն:
- Առողջապահական կազմակերպությունների տարեկան բյուջեի մեջ վճարովի ծառայությունների տեսակարար կշիռը 31.12.2020թ.-ի դրությամբ կազմել 1084902,4 հազ. դրամ: 2019թ. համեմատ վճարովի ծառայությունների մուտքերը նվազել են շուրջ 10%-ով: Երկրում կորոնավիրուսային հիվանդության տարածման հետ կապված՝ առողջապահական ընկերություններում իրականացվել են միայն անհետաձգելի վիճակների և հիվանդությունների բուժում՝ դադարեցնելով պլանային բուժօգնությունն ու սպասարկումը: Վճարովի ծառայությունների և առողջապահական ընկերություններում ներդրումների նվազումը պայմանավորված են եղել նաև ՀՀ-ում հայտարարված ռազմական դրությամբ և Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած պատերազմով:

2021թ.-ին նախատեսվում է վճարովի ծառայությունների աճ ևս 10%-ով:

2021թ. առողջապահության բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի 6,745,831. 6 հազար դրամ:

6.4 Սոցիալական ապահովություն

ՀՀ Լոռու մարզում 01.01.2021թ. դրությամբ ընտանեկան և սոցիալական նպաստ ստացող ընտանիքների միջինացված թիվը 13.047 է, կենսաթոշակառուների թիվը 50.026, հաշմանդամություն ունեցող անձանց թիվը՝ 16.386 /որից՝ 689՝ մանկուց/:

2021թ. ՄԶՌ-ի սոցիլական ապահովության ոլորտի ուղղություններով առաջարկված ծրագրերում ոլորտային նպատակ է դիտվում բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիության ապահովումը և որակի բարձրացումը: Ծրագրերի կենսագործմանը կուղղորդվեն Լոռու մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների համակարգի գործունեության արդյունավետությանը և որակի բարձրացմանը միտված նյութատեխնիկական պայմանների բարելավումը /առաջարկվել է՝ «Լոռու մարզում սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների շենքային պայմանների բարելավում և սոցիալական տարբեր ծառայությունների գործունեության կազմակերպում և համակարգում» թիվ 1 ծրագիրը/, Սոցիալական ապահովության բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստումը, Սոցիալական սպասարկման բնագավառի մատչելի միջավայրի ապահովումը /առաջարկվել է՝ «Լոռու մարզի քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցում» թիվ 2 ծրագիրը/, Աջակցություն բնակարանային ապահովման քաղաքականությանը /առաջարկվել են «Զոհված կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովում» թիվ 3 ծրագիրը/:

2021թ. սոցիալական ծառայությունների մատչելիությունն ու որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ընդլայնել սոցիալապես խոցելի խմբերին ուղղված աջակցության ծրագրերը, մասնավորապես բարելավել կարիքավոր ընտանիքների, անօգնական տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց և գործազուրկների պաշտպանվածությունը:

2020թ. սեպտեմբերին 27-ից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով նկատելիորեն մեծացավ սոցիալական աջակցության ենթակա ընտանիքների թիվը, բացի պետական աջակցությունից կարիք կլինի սոցիալական աջակցության գումարների նկատելի մասը ուղղել այդ ընտանիքների /վիրավոր, զոհված, զինհաշմանդամություն ունեցող/ սոցիալական վիճակի բարելավմանը: Ինչպես նաև պատերազմի հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած անձանց վերականգնողական ծառայությունները խթանելու նպատակով նախատեսվում են մարզում իրականացնել միջոցառումներ՝ Զինվորական ծառայության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման միջոցառումների ծրագրով և Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2021 թվականի տարեկան ծրագրով սահմանված՝ մարզպետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվությամբ իրականցվելիք միջոցառումների շրջանակներում:

Բազմամյա ծրագրերի իրականացման համար նախատեսվում են իրականացնել ընդգրկուն աշխատանքներ, որոնցում կարևորվում է նաև սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների շարունակական աջակցության ցուցաբերումը:

Պետությունը ուղղորդված և կանոնակարգված աշխատանքներ է իրականացնում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի կայացման ուղղությամբ, որը ՄԶԳ ծրագրով նախատեսված աշխատանքներից է, որի իրականացմամբ Լոռու մարզում արմատապես կլուծվի այդ կառույցների շենքային պայմանների բարելավման հիմնախնդիրը: Վանաձորում գործում է հիմնանորոգված և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կահավորված և տեխնիկապես վերազինված Համալիր կենտրոնը, իսկ Տաշիրում 2020թ. գործում է Համալիր կենտրոնը /համայնքային կենտրոնի առաջին երկու հարկերում/, իսկ մյուս տարածաշրջանային կենտրոններում, մասնավորապես՝ Ստեփանավանում՝ 2021թ. ավարտին կհասցվի Համալիր կենտրոնի կառուցումը, Ալավերդիում ընթանում են շինարարական աշխատանքները, իսկ Սպիտակում դեռևս տարածքի ճշգրտման ահրաժեշտություն կա: Պետական քաղաքականության հիմքում դրված է որակյալ համալիր սոցիալական ծառայությունների մատուցումը, որի իրականացման համար շատ է կարևորվում նաև սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների /պետական, ոչ պետական/ համակարգչային տեխնիկայով հագեցվածությունը և համացանցային կապով ապահովումը:

Որակյալ սոցիալական ծառայություններ մատուցելու նախապայման է բնագավառում ներգրավված սոցիալական աշխատանքի մասնագետների մասնագիտական հմտությունների շարունակական կրթությունը:

2021թ. զբաղվածության արդյունավետությունը բարձրացնելու, գործազուրկների և աշխատանք փնտրողների համար աշխատանքի հնարավորությունները մեծացնելու նպատակով ՀՀ կառավարությունը կշարունակի իր նպատակամետ քաղաքականությունը:

ՄԶՌ առաջարկվել է նաև տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծմանն ուղղված քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցումը: Այս գործընթացում 2020թ. գլխավորապես Համավարակի պատճառով աշխուժություն չեղավ:

2021թ. նոր որակ է սպասվում հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ապահովման հարցում, այդ ակնկալելի է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության թիրախավորված է տարեկան միջոցառումների ծրագրից ելնելով:

«Աստղիկ» ԲՀ-ի կողմից Լոռու մարզում նախատեսվում է շուրջ 78,0 մլն դրամի սոցիալական աջակցություն:

Հայկական Կարիտաս կազմակերպության կողմից «Բազմակի աջակցություն ԼՂ պատերազմի արդյունքում տուժած բնակչությանը» ծրագրի շրջանակներում 425 ընտանիքի համար 2021թ-ին կնախատեսվի սոցիալական աջակցություն:

ՀՀ Լոռու մարզի 2021 թվականի գործունեության ծրագիր

«Մարդը կարիքի մեջ» չեխական ՀԿ-ի «ԵՄ COVID-19 հետևանքների չեզոքացման աջակցության ծրագիր Արևելյան գործընկերության երկրների համար» ծրագրի շրջանակում կշարունակվեն սոցիալական աջակցությունները:

Լոռու մարզում միջոցառներ են իրականացվում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների իրացումն ապահովելուն ուղղված հետևողական միջոցառումները: Ելնելով այն հանգամանքից, որ հանրապետության խնամատար ընտանիքների շուրջ 41 տոկոսը բնակվում են Լոռու մարզում՝ մարզպետարանի ուշադրության կենտրոնում է հոգեզավակների խնամքի և դաստիարակության պատշաճ իրականացման նկատմամբ տարվող, ինչպես նաև նշված երեխաների՝ կենսաբանական ընտանիքների հետ վերամիավորմանն ուղղված աշխատանքների իրականացումը:

Լոռու մարզպետարանին կից գործում է գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովը, որի աշխատանքներն նպատակաուղղված են մարզում գենդերային քաղաքականության իրականացման ուղղություններին, ծրագրերին և վերոգրյալ հանձնաժողովների կողմից պլանավորվող աշխատանքներին:

2021թ. սոցիալական ապահովության բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 6,040,155. 7 հազար դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 28 ժամանակավոր աշխատատեղ:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

7.1 Ճանապարհաշինություն

Համաձայն ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 13-ի N265-Ն որոշման, Լոռու մարզում ավտոմոբիլային ճանապարհների ցանցը կազմում է 878.0կմ, այդ թվում ըստ նշանակության՝

- միջպետական 216.2 կմ
- հանրապետական 262.7 կմ
- մարզային (տեղական) 399.1 կմ

Մարզում կան

- կամուրջ և կամրջային անցում 175 հատ
- ավտոմոբիլային թունել 5 հատ

Մարզով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհները կազմում են Հայաստանի Հանրապետության միջպետական ավտոճանապարհային ցանցի 12.2%-ը: Ներկայումս ընթացքի մեջ են Մ-6՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի 2-րդ փուլով նախատեսված աշխատանքները (ավարտը նախատեսված է 2021թ վերջին):

Պետբյուջեի միայն սեփական միջոցներով իրականացվելու են 5.71 մլրդ դրամի, իսկ վարկային միջոցների հաշվին 5.2 մլրդ դրամի աշխատանքներ, այդ թվում ՝

- Մ-3 միջպետական նշանակության ճանապարհների հիմնանորոգում, երկարությունը՝ 30.4կմ
- Հ-25, Հ-33 հանրապետական նշանակության ճանապարհահների հիմնանորոգում, երկարությունը՝ 13.1կմ;
- Տ-5-32 և Տ-5-41 մարզային (տեղական) նշանակության ճանապարհների հիմանորոգում: Հիմնանորոգվող հատվածի երկարությունը՝ 12.67 կմ
- Մարզային նշանակության ա/ճանապարհների պահպանում և շահագործում: Սպասարկվող ճանապարհների երկարություն՝ 87կմ:
- Պետական վարկային միջոցներով՝
- Մ6՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ38+450 - կմ90+191 հատվածի վերականգնման և բարելավման աշխատանքներ՝ 3 837.7 մլն դրամ
- Մ6-Եղեգնուտ-Դեբեդ մարզային նշանակության ճանապարհի հիմնանորոգում, արժեքը՝ 785.4 մլն դրամ:
- Տ-5-32-Կաթնաջուր մարզային նշանակության ճանապարհի հիմնանորոգում, արժեքը՝ 604.6 մլն դրամ:

Մարզում ներհամայնքային ճանապարհների վերանորոգման աշխատանքներ կիրականացվեն նաև համայնքներին պետ. բյուջեից տրամադրվող և համայնքների համաֆինանսավորմամբ իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Ուղևորահոսքի սակավության պատճառով մարզի ութ փոքր համայնքներից կանոնավոր ուղևորափոխադրումներ չեն իրականացվում: Այդ համայնքներից ուղևորափոխադրումներն իրականացվում են սեփական և տաքսի ծառայության ավտոմեքենաներով:

Համաձայն Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ստեղծման տեխնիկական առաջադրանքի՝ նախատեսվում է մարզի խոշոր քաղաքներից կամ մարզկենտրոնից դեպի Երևան, կամ այլ մարզի խոշոր քաղաքներ և դրա հետ միասին տվյալ խոշոր քաղաքը կամ մարզկենտրոնը իրեն հարող բոլոր բնակավայրերին կապող երթուղիների սպասարկման համար հայտարարել մրցույթներ մեկ փաթեթով: Արդյունքում հնարավոր կլինի ընտրել մեկ փոխադրող, որը կսպասարկի մարզի ինչպես շահութաբեր, այնպես էլ ոչ շահութաբեր երթուղիները ամբողջովին:

2021թ. ճանապարհաշինության բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 11,820,997.7 հազար դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 745 ժամանակավոր աշխատատեղ:

7.2 Ջրամատակարարում և ջրահեռացում

Մարզի բնակչությանը կայուն, մատչելի և որակյալ խմելու ջրամատակարարման բարելավումը ոլորտի զարգացման նպատակներից է: Մարզի համայնքների շուրջ 65-70%-ում գործում է շուրջօրյա ջրամատակարարում:

ՄՋՌ-ի ոլորտի հիմնախնդիր է հանդիսանում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մաշվածությունը: Ջրամատակարարման խնդիր ունի մարզի բնակչության

2.1%-ը, իսկ ջրահեռացման խնդիր ունեցող՝ բազմաբնակարան շենքերում ապրող բնակիչները կազմում են մարզի բնակչության 3.0%-ը:

ՀՀ Լոռու մարզում Հայ-Գերմանական համագործակցության ծրագրի շրջանակներում KFW բանկի ֆինանսավորմամբ նախատեսված են՝ Վանաձորի 8-րդ ճնշումային գոտու բաշխիչ ցանցի վերակառուցման, իսկ Ամրակից, Անտառամուտ, Ձորագյուղ, Գուգարք, Հոբարձի, Վարդաբլուր, Կուրթան, Լեռնապատ, Վահագնի համայնքներում բաշխիչ ցանցերի, ՕԿՋ-ների և 3 գետային ջրընդունիչների վերակառուցման աշխատանքները 4.2մլրդ դրամով:

ՀՀ պետական բյուջեով (ՀՏՋՀ) կիրականացվեն խմելու ջրագծերի կառուցման, վերանորոգման և այլ բարեկարգման աշխատանքներ 91,640.0 հազ. դրամով:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ ՊԿԱԾ ծրագրի շրջանակներում 2021թ. նախատեսված են 230,0 մլն դրամի աշխատանքներ:

Մարզի Գուգարք, Մարգահովիտ, Եղեգնուտ, Ազնվաձոր, Սարամեջ, Քարաձոր, Շենավան, Գոգարան, Ալավերդի, Չկալով համայնքում սեփական միջոցներով կիրականացվեն ջրամատակարարման համակարգերի վերանորոգման աշխատանքներ 17.183.66 հազ.դրամ արժեքով:

Պետական աջակցության սուբվենցիոն ծրագրերով 22 համայնքներում կիրականացվեն խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման, ոռոգման համակարգերի վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ:

2021 թվականին ջրամատակարարման և ջրահեռացման բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 6,887,084. 7 հազար դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 345 ժամանակավոր աշխատատեղ:

7.3 Գազամատակարարում

Լոռու մարզն ունի 56 համայնք, որից 7 քաղաքային բնակավար ունեցող և 49 բացառապես գյուղական բնակավայրերից կազմված համայնքներ, որոնք բաշխված են 5 տարածաշրջանների մեջ: 01.01.2021թ. դրությամբ մարզում առկա է գազաֆիկացված 5191.0%) և չգազաֆիկացված 5 (9.0%) համայնք: Գազաֆիկացված 8 համայնքներում գազաֆիկացված չէ նաև 25 բնակավայր:

2020թ-ին ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում գազաֆիկացվել է Չկալով համայնքը: Նույն ծրագրի շրջանակներում Շնող համայնքում ընթացքի մեջ են Թեղուտ և Քարկոփ բնակավայրերի և Շնող բնակավայրում Շեկ աղբյուր, Վարդուտ և Չալեր թաղամասերի գազաֆիկացման աշխատանքները: Շնող համայնքում գազաֆիկացման աշխատանքների ավարտը նախատեսվում է 2021 թվականին: 2021թ.-ին ոլորտում նախատեսվում են Գյուլագարակ, Վանաձոր, Վարդաբլուր, Սվերդլով, Գուգարք, Ալավերդի, Տաշիր, Կաթնառատ, Մեծավան, Սպիտակ, Դսեղ համայնքները սնող միջին և ցածր ճնշման ստորգետնյա գազատարերի և մեկուսիչ ծածկույթի նորոգման, Կարմիր Կամուրջ-Ալավերդի Dպ700 մայրուղային գազատարի կապիտալ նորոգման,

բնական գազի կենցաղային հաշվիչների, պաշտպանիչ արկղերի, վթարային անջատիչ կափույրների ու ազդանշանային սարքերի տեղադրման աշխատանքներ:
Ինչպես նաև Ջրաշեն համայնքի բյուջի միջոցների հաշվին նախատեսվում գազաֆիկացման աշխատանքներ:

Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մարզի 3 համայնքներում կիրականացվեն գազաֆիկացման աշխատանքներ:

2021թ. գազամատակարարման բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 1,247,369. 8 հազար դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 41 ժամանակավոր աշխատատեղ:

7.4 Էներգետիկա

Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին և ապահովված են հիմնականում անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարմամբ:

Այդ թվում՝

- Վերակառուցման և զարգացման միջազգային (ՎԶՄԲ) բանկի աջակցությամբ կիրականացվեն «Վանաձոր-1» 110/10/6 կՎ ենթակայանի վերակառուցման աշխատանքներ:
- Պետբյուջեի ֆինանսավորմամբ կիրականացվեն էլեկտրական սարքավորումների և օդային գծերի շահագործման ու նորոգման աշխատանքներ:
- «ՀԷՑ» ՓԲԸ-ի ներդրումային ծրագրով կիրականացվեն օդային և մալուխային գծերի վերակառուցման և այլ աշխատանքներ:

Համայնքային բյուջեների հաշվին մարզի թվով 9 համայնքներում կիրականացվեն փողոցային լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ:

2021թ.-ին համայնքներին սուբվենցիաների տրամադրման շրջանակներում նախատեսվում է մարզի 14 համայնքներում լուսավորության անցկացման ծրագրեր և 2 համայնքներում էներգախնայող միջոցառումների կիրառում:

2021թ. էներգետիկայի բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 1773,215,. 8 հազար դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 196 ժամանակավոր աշխատատեղ:

VIII. **ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ**

Մարզի քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները կապված են բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերի սեյսմակայունության բարձրացման և վերանորոգման, առողջապահական օբյեկտների կառուցման և վերանորոգման և համապատասխանեցման ժամանակակից պահանջներին, էներգոխնայողության համակարգերի տեղադրման, մշակութային, նախադպրոցական, մարզական օբյեկտների, բազմաբնակարան շենքերի

հիմնանորոգման, 3-րդ աստիճանի վթարայնություն ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի ամրացման, բազմաբնակարան շենքերի վնասվածության աստիճանի որոշման նպատակով հետազննումների անցկացման, բնակավայրերի բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործին պետական աջակցության, քաղաքաշինության ոլորտի գործընթացի հստակեցման, իրավասու մարմինների վարչարարության, թույլտվությունների, եզրակացությունների տրամադրման պարզեցման, ինչպես նաև քաղաքաշինական այլ խնդիրների հետ:

Մարզում հիմնախնդիր է մնացել աղետի գոտու գյուղական բնակավայրերում անօթևան մնացած ընտանիքների բնակարանով ապահովման հարցը:

Քաղաքաշինության ոլորտի զարգացման նպատակներն են 3-րդ աստիճանի վթարայնություն ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի ամրացումը, բազմաբնակարան բնակարանային ֆոնդի վերականգնումը, բակերի բարեկարգումը, կոմունալ ենթակառուցվածքների վերանորոգումը, միավորված համայնքների համակցված գլխավոր հատակագծերի և շինարարական օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը:

ՀՀ կառավարության 07.05.2020թ. թիվ 712-Ն որոշմամբ Լոռու մարզպետարանին հատկացվել է 1,868,936.8 հազ. դրամ այն ուղղվել է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմին, որից՝

- 1,819,516,8 հազ. դրամը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի գյուղական բնակավայրերում ծրագրի շահառու ճանաչված 153 ընտանիքի համար բնակելի տների կառուցման նպատակով (1,817,527.8 հազ. դրամը՝ բուն շինարարական, իսկ 1,989.0 հազ. դրամը՝ արդեն շինարարությունն ավարտված բնակելի տների չափագրման աշխատանքների համար),
- 49,096.0 հազ. դրամը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ քաղաքում և գյուղական բնակավայրերում ծրագրի շահառու ճանաչված 9 ընտանիքի բնակարանի գնման վկայագրի միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու նպատակով ֆինանսական աջակցության տրամադրման համար,152 շահառու ընտանիքից 144-ի հետ «Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական կազմակերպությունը կնքել է պայմանագրեր և աշխատանքները սկսված են: Մնացած 8 ընտանիքի հետ պարզվում են նախագծծերի և թերի փաստաթղթերի նեկայացման հարցերը: Ծրագիրը շարունակական է:

«Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում» միջոցառման շրջանակներում 2021թ. նախատեսվում է մշակել միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման 2 փաստաթուղթ՝ ՀՀ Լոռու մարզի 22՝ Գեղասար, Շիրակամուտ, Գոգարան, Լուսաղբյուր, Սարահարթ, Կաթնաջուր, Սարալանջ, Մեծ Պարնի, Ծաղկաբեր, Խնկոյան, Հարթագյուղ, Ստեփանավան քաղաք (Արմանիս), Կաթնաղբյուր, Ուրասար, Գյուլագարակ (խոշորացված համայնք)- Գյուլագարակ, Ամրակից, Գարգառ, Կուրթան, Հոբարձի, Պուշկինո, Վարդաբլուր բնակավայրերի համար:

Սուբվենցիոն ծրագրեր.

2021թ.-ին Լոռու մարզում սուբվենցիոն ծրագրերի շրջանակում նախատեսվում է շուրջ **5,1 մլրդ** դրամի աշխատանքներ, որից

- ✓ Համայնքային ներդրում- 2,3 մլրդ դրամ
- ✓ Պետական ներդրում- 2,6 մլրդ դրամ
- ✓ Այլ միջոցներով ներդրում - 139 մլն դրամ

Ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվեն 1501 ժամանակավոր և 92 հիմնական աշխատատեղ:

2021թ. քաղաքաշինության բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 3.483,457. 6 հազար դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 78 մշտական և 859 ժամանակավոր աշխատատեղ:

IX. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

9.1 Տարածքային կառավարում

ՀՀ պետական բյուջեից մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերի և ենթակա կրթական և մշակութային ՊՈԱԿ-ներին հատկացված գումարների վերաբերյալ

2020-2021թթ.

	2020թ. փաստացի	2021թ. նախատեսված	2021թ.-ին 2020թ.-ի նկատմամբ /հազ. դրամ/	2021թ.-ին 2020թ.-ի նկատմամբ /%-ով/
ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի պահպանում	634271.6	654065.3	19793.7	103.7
Պետական ոչ առևտրային կազմակերպություններին հատկացված գումար, որից՝	7788557.9	8458420.6	669862.7	108.6
ա/ Կրթական ոլորտի	7768906.5	8438934.3	670027.8	108.6
բ/ Մշակութային ոլորտի	19651.4	19486.3	-165.1	99.2

Մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերը 2020 թվականին փաստացի կազմել է 634271.6 հազ. դրամ: 2020 թվականին նախատեսված է 654065.3 հազ. դրամ, կամ ավել է նախատեսված 19793.7 հազ. դրամով /աճ՝3.7%/: ՀՀ Լոռու մարզպետարանի պահպանման ծախսերի «Վարչական սարքավորումներ» հոդվածով 2020թ. նախատեսված էր 3500.0 հազ. դրամ, 2021թ. նշված հոդվածով գումար չի նախատեսված:
Կրթության ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպություններին հատկացված փաստացի գումարը 2020թ.-ին կազմել է 7788557.9 հազ. դրամ: 2021թ.-ի համար նախատեսված է 8458420.6 հազ. դրամ/աճը՝ 8.6%/:

Մշակութայի ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպության /Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան/ պահպանման ծախսերը 2020թ.-ին փաստացի կազմել է 19651.4 հազ. դրամ, 2021 թվականին նախատեսված է 19486.3 հազ. դրամ, կամ նվազել է 165.1 հազ. դրամով/ նվազում՝ 0.8%/:

Ծրագրերի իրականացման արդյունքում կապահովվի.

- օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացում,
- մարզպետի աշխատակազմի օպտիմալացում և կառուցվածքային փոփոխության իրականացում,
- մարզպետարանի աշխատատեղերի կահավորում և տեխնիկական հագեցում,
- համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրման գործընթացի շարունակում,
- մարզպետարանի տեղեկատվական, կառուցվածքային կառավարչական գործառույթների բարելավում,
- մարզպետարանի, ՏԻՄ-երի և ՀԳՄ տարածքային ստորաբաժանումների փոխհարաբերությունների սերտացում,
- մարզպետարանի քաղաքացիական ծառայողների վերապատրաստումների շարունակում,
- մարզպետի կողմից իրականացնել իրավական և մասնագիտական վերահսկողություն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների իրականացման նկատմամբ,
- մարզպետարանի և համայնքապետարանների մասնագետների, մարզային ռազմավարության իրականացման սուբյեկտների շարունակական մասնագիտական վերապատրաստումների իրականացում,
- մարզում չօգտագործվող պետական և համայնքային գույքի հաշվառումը, ըստ պիտանելիության աստիճանի դասակարգումը և իրականացվելիք ծրագրերի համար որպես արտադրական և գրասենյակային տարածքներ օգտագործելու համար սեփականատերերի հետ քննարկումների կազմակերպումը,
- մարզպետարանի աջակցությամբ կամ ուղղակի գործողություններով մարզում կատարված ներդրումների ծավալի ավելացումը,

- մարզպետարանի և ՏԻՄ-երի, մասնավոր հատվածի միջև համագործակցության մակարդակի բարձրացումը:

9.2 Տեղական ինքնակառավարում

2020թ. ՀՀ Լոռու մարզի համայնքներում 1 շնչին ընկնող սեփական եկամուտները (215.5 հազ. մարդ) փաստացի կազմել է 10.7 հազ. դրամ, 12.1 հազ. դրամ դրամ պլանավորվածի դիմաց, 2021թ. համար նախատեսվել է 12.5 հազ. դրամ կամ մարզում բնակչության 1 շնչի հաշվով սեփական եկամուտները 2021 թ.ին պլանավորվում է ավելացնել 3.3%-ով պլանի նկատմամբ, 16.8%-ով փաստացիի նկատմամբ :

Լոռու մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները 2020թ. համար նախատեսվել էր 2,629,129.8 հազ. դրամ, փաստացի կատարումը կազմել է 2,312,617.6 հազ. դրամ, իսկ 2021թ. համար նախատեսվել է 2,695,435.5 հազ. դրամ, որի աճը 2020թ. պլանի նկատմամբ նախատեսվել է 2.5.% աճ, իսկ 2020թ. փաստացիի նկատմամբ 16.6% աճ և ընդամենը եկամուտների մեջ սեփական *եկամուտների տեսակարար կշիռը նախատեսվել է 25.2.%:*

2021թ. տեղական ինքնակառավարման ոլորտի առաջնահերթություններն են.

- վարչատարածքային բարեփոխումների շարունակումը,
- տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքապետարանների աշխատակազմերի տեխնիկական և մասնագիտական հմտությունների զարգացումը,
- համայնքների զարգացման ծրագրերը մարզային զարգացման ռազմավարությանը համապատասխանեցման շարունակումը.
- տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանի բարձրացումը,
- նախորդ տարվա համեմատությամբ համայնքների բյուջեների սեփական եկամուտների աճի ապահովումը,
- համայնքապետարանների աշխատակազմերի գործունեության արդյունավետության բարձրացումը, մատուցվող ծառայությունների որակի բարելավումը,
- համայնքների զարգացման գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովումը,
- աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների որակի բարելավումը և հասանելիության ապահովումը:

9.3 Քաղաքացիական հասարակություն

2021 թվականի ընթացքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովելու նպատակով մարզպետարանի, ՏԻՄ-երի, ՀԼՄ-ների և մարզի հասարակական կազմակերպությունների համագործակցությամբ նախատեսվում է

իրականացնել հետևյալ միջոցառումները.

- մարզում գործող ՀԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների հետ անհրաժեշտ համագործակցության կազմակերպում՝ հանրային իրազեկման աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու նկատառումներով,
- պարբերաբար կազմակերպել հանրային քննարկումներ՝ հանրային կարևորություն ներկայացնող հարցերի առնչությամբ,
- ապահովել մարզպետի, համայնքների ղեկավարների, ավագանու անդամների կողմից հանրությանը ներկայացվող հաշվետվությունների, ինչպես նաև մարզի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների իրագործման վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը,
- ապահովել մասնակցային կառավարումը և հասարակական կազմակերպություններին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին և բնակիչներին մասնակից դարձնել որոշումների ընդունմանը և բարձրացնել հանրությանիրազեկվածության աստիճանը,
- շարունակել մարզպետարանի և համայնքների պաշտոնական ինտերնետային կայքերի հնարավորությունների կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները,
- մարզպետի, նրա տեղակալի և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների՝ համայնքներ կատարվող այցելությունների լուսաբանման աշխատանքների շարունակական կազմակերպում:

9.4 Արտակարգ իրավիճակների բնակչության և տարածքների պաշտպանություն

Բնական և տեխնածին աղետների ժամանակ բնակչության պաշտպանվածության խնդիրը պետք է մշտապես գտնվի պատասխանատու մարմինների ուշադրության կենտրոնում: Ռիսկերի նվազեցման գործընթացում գլխավոր պայմանը հասարակության պատրաստվածությունն է բնական և տեխնածին աղետներին: Այս գործընթացում կարևորվում է աղետների վերաբերյալ տեղեկատվական, վերլուծական, ինչպես նաև ազդարարման, իրազեկման աշխատանքների կազմակերպումը:

Լոռու մարզը՝ աղետների առումով, գտնվում է բարձր ռիսկային գոտում, որը լուրջ սպառնալիք է ազգաբնակչության, մարզի և համայնքների կայուն զարգացման համար: Աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) կարողությունների զարգացումը կարևոր նախադրյալ է համայնքի անվտանգ լինելու համար:

ԱՌԿ համակարգը գործընթացների և գործառույթների մի շրջանակ է, որի նպատակն է բարձրացնել աղետներին դիմակայելու կարողությունները: Այն նպատակաուղղված է կանխելու կամ կանխարգելելու վտանգները, նվազեցնելու այդ վտանգների հնարավոր բացասական ազդեցությունը, ինչպես նաև նպաստելու, մարզի, համայնքների և հասարակության կայուն զարգացմանը:

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտում 2021 թվականի հիմնական միջոցառումներն են՝

- Աղետների ռիսկի կառավարման պլանից բխող ծրագրերի մշակում, այդ թվում նաև նոր կազմվող զարգացման ծրագրերում աղետների ռիսկերի նվազեցման բաղադրիչների ներառում.
- ազդարարման, տարահանման և պատսպարման հարցերով բնակչության իրազեկվածության ապահովում
- մարզի բնակչության ազդարարման համակարգի արդիականացում և վերազինում
- համայնքներում և կազմակերպություններում բնակչության և աշխատակիցների պատսպարման համար նախատեսված պաշտպանական կառույցների սպասարկման կազմավորումների ստեղծում
- մարզային և համայնքային բյուջեներում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում միջոցառումների իրականացման նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսում
- մարզպետների և համայնքների ղեկավարների կառավարման կետերի վերանորոգում և վերազինում
- հաշվառված հրշեջ հիդրանտների և հրշեջ ծորակների սարքինության, համապատասխանության և բավարար քանակի ապահովում
- հրդեհային կանխարգելման աշխատանքների իրականացում (խոտհունձ, վերահսկվող կրակ, ոռոգման համակարգերի կանոնավոր աշխատանք, հակահրդեհային պատնեշների կառուցում և այլն)
- հանրակրթական դպրոցների և համայնքների աղետների ռիսկի կառավարման պլանների մշակման գործընթացի ուղղությամբ աշխատանքների իրականացում,
- մարզերի բնակչության պատսպարման հնարավորությունների ավելացում, մարզի բազմաբնակարան շենքերի նկուղների հաշվառում, բազմաբնակարան շենքերի նկուղներում բնակչության կցագրման հաշվարկների ճշգրտում,
- մարզի բոլոր մակարդակների ՔՊ պլանների, պլան-ժամանակացույցերի և տարահանման հաշվարկների ճշգրտում՝ դրանք դարձնելով իրատեսական, հատուկ ուշադրություն դարձնելով ՔՊ ծառայությունների և ՔՊ կազմավորումների անձնակազմերի համալրվածությանը՝ հաշվի առնելով նրանց տարիքային և զորահավաքին ներգրավվածության առանձնահատկությունները:

Լոռու մարզի դպրոցներում և մանկապարտեզներում սեյսմապաշտպանության վարքականոնների ուսուցման, ուսումնական տագնապ–վարժանքների, իսկ մարզպետարանների, գյուղապետարանների և համայնքապետարանների աշխատակիցների համար՝ սեյսմապաշտպանության թեմայով իրազեկման բարձրացման աշխատանքների կազմակերպում և իրականացում:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների պատրաստվածության բարձրացման նպատակով 2021 թվականին անց են կացվելու ուսումնավարժություններ՝

- Մեկ հրամանատարաշտաբային ուսումնավարժություն.
- Մեկ շտաբային ուսումնավարժություն.
- Մարզի 30 համայնքների կողմից շտաբային ուսումնավարժությունների անցկացում.
- Մեկ ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացում.
- Հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացում մարզի 5 կազմակերպություններում:

Մյուս հիմնախնդիրը գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելումն է, որի նպատակով մարզի տարածքում պետք է կատարվեն գետերի հուների, հեղեղատարների մաքրման և ափապաշտպան կառույցների վերանորոգման աշխատանքներ:

2021թ. նախատեսվում է համայնքների բյուջեների միջոցներով իրականացնել սելավատարերի և հեղեղատարների մաքրման ու նորոգման աշխատանքներ:

2021թ. տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում, քաղաքացիական հասարակություն և արտակարգ իրավիճակներ ոլորտում նախատեսվում է 1,290,075. 3 հազար դրամի ներդրում: Նախատեսվում է ստեղծել 5 մշտական և 150 ժամանակավոր աշխատատեղ:

X. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Լոռու մարզի 2021 գործունեության ծրագրի համար կարևորվում է մշտադիտարկումը, որը կիրականացվի մարզային վարչակազմի կողմից՝ մոնիտորինգի և գնահատման (ՄԳ) համակարգի միջոցով: ՄԳ համակարգը կվերահսկի Ծրագրի կատարումը, կամփոփի 2021 թվականի գործունեության արդյունքները՝ ՄԶՌ նպատակներին հասնելու առումով:

Մոնիտորինգի տարեկան հաշվետվությունը կամփոփի տարվա ընթացքում նախատեսված բոլոր միջոցառումների վերաբերյալ ՄԳ համակարգից ստացված արդյունքները: Այն կներառի հետևյալ գլխավոր բաժինները.

- տարեկան ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումները, կատարված ծախսերը և արդյունքները,
- հաջորդ տարվա հիմնախնդիրները, այդ թվում՝ քաղաքականությունների ուրվագծումը:

ՄԳ տարեկան հաշվետվությունը պատրաստելուց հետո կկազմակերպվի ՄԳ արդյունքներն ամփոփող խորհրդակցություն, որին կմասնակցեն ինչպես մարզի խորհրդի, այնպես էլ քաղաքացիական հասարակության և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչները:

XI. ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Լոռու մարզի 2021 թվականի գործունեության ծրագրի ընդհանուր ֆինանսավորումը կազմում է 53,816,884.3 հազար դրամ, այդ թվում՝

- պետական բյուջե 45,583,348. 5 հազար դրամ
  - *սեփական միջոցներ* *33,083,891.5* հազար դրամ
  - *վարկային միջոցներ* *12,499,457.0 հազար դրամ*
- միջազգային ու դոնոր կազմակերպությունների միջոցներ 1,726,949.7 հազար դրամ
- համայնքային ներդրումներ 2,634,834.8 հազար դրամ
- մասնավոր ներդրումներ 3,871,751.3 հազար դրամ
- այլ աղբյուներ 0,0 հազար դրամ:

2021 թվականին նախատեսվում է ստեղծել **151 մշտական և 3250 ժամանակավոր աշխատատեղ**:

XII. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1 *- ՀՀ Լոռու մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությանից բխող 2021 թվականի տարեկան գործունեության ծրագրի տրամաբանական հենք*

Հավելված 2 *- ՀՀ Լոռու մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությանից բխող 2021 թվականի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորումը՝ ըստ ոլորտների*

Հավելված 3 *- ՀՀ Լոռու մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությանից բխող 2021 թվականի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված բոլոր ոլորտների ամփոփ ֆինանսավորումը*